Հաշվետվություն

ՓՄՁ պետական աջակցության 2018 թվականի ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ

Ճշտված պլան – 152.6 մլն դրամ, ֆինանսավորում – 147.5 մլն դրամ, դրամարկղային ծախս՝ 147.5 մլն դրամ, 2017 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 152.6 մլն դրամ: 2018 թվականի և 2017 թվականի դրամարկղային ծախսի շեղումը կազմել է 5.1 մլն դրամ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից չի իրականացվել *«Կանանց ձեռներեցությանն աջակցություն»* ծրագրային կետով նախատեսված «Լավագույն կին գործարար» 2018 թվականի մրցանակաբաշխության միջոցառումը:

«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրի շրջանակներում ապահովվել է ծրագիրն իրականացնող հիմնական կառույցի՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի անձնակազմի և փորձագետների վարձատրությունը՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմամբ:

2018 թվականի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվել է 8979 աջակցություն շուրջ 4000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների (որոնց 3,9 %-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96,1 %-ը՝ ՀՀ մարզերում) հետևյալ ուղղություններով.

Սկսնակ գործարարներին ձեռներեցությանն աջակցության մասով աջակցություն է տրամադրվել 313 սկսնակ գործարարի, *ուսուցողական աջակցության* մասով աջակցություն է տրամադրվել 314 ՓՄՁ սուբյեկտների:

«ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխություններին ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով շուրջ 3800 սկսնակ և գործող ՓՄՁ

սուբյեկտներին անհատական, խմբային հանդիպումների և հեռահաղորդակցության միջոցներով տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն է տրամադրվել 8010 անգամ:

ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն (Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից երաշխավորությունների տրամադրում) ծրագրի շրջանակներում գործող 5 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 48,3 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ ապահովելով 72,4 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ:

«Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)» 2018 թվականի ընթացքում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն են ստացել 56 սկսնակ գործարարներ: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 222,3 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 228.7 մլն ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 4.1 մլն ՀՀ դրամ, ստացված վարկային միջոցների միջին գումարը՝ 4.0 մլն ՀՀ դրամ:

Գործարար նախաձեռնություններին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում) ծրագրի շրջանակներում 3 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 83.3 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ ապահովելով 75 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 25 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 27.7 մլն ՀՀ դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 12.0%:

«Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն» ծրագրային միջոցառման առնչությամբ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել և իրականացման փուլում է 6 ենթակառուցվածքային ծրագիր, 71 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների համար կազմակերպվել են նաև տեխնոլոգիական դասընթացներ, դրամաշնորհ են ստացել 49 ձեռնարկատերեր:

«Կանանց ձեռներեցությանն աջակցություն» «Լավագույն կին գործարար» 2018 թվականի մրցանակաբաշխության միջոցառումը չի իրականացվել, հետևաբար, ծրագրային սույն կետը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից համարվել է ***չկատարված:*** Միջոցառման անցկացման համար նախատեսված 5100.0 հազ դրամ գումարը չի փոխանցվել:

«Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում «Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովում» ծրագրային միջոցառման ուղղությամբ Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում բիզնեսի միջազգայնացմանն ուղղված 408 տարաբնույթ ծառայություններ են մատուցվել 229 ՓՄՁ սուբյեկտների, այդ թվում՝ 29 ՓՄՁ սուբյեկտների գործարար նկարագրեր տեղադրվել են ՁԵՑ-ում, 8 ՓՄՁ սուբյեկտներ կնքել են համագործակցության համաձայնագիր, 1 ՓՄՁ սուբյեկտ կնքել է համագործակցություն՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունքում, 191 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել են տարբեր տեսակի աջակցություններ, այդ թվում՝ տեղադրվել են հարցումներ ՁԵՑ-ում, ուղարկվել են հետաքրքրության առաջարկներ և ստացված կոնտակտները ներկայացվել են տեղական ընկերություններին, ստացվել են հետաքրքրության առաջարկներ և ներկայացվել են նշված ընկերությունների տվյալները, մասնակցել են ՁԵՑ շրջանակներում կազմակերպված գործարար հանդիպումներին, ստացել են նորարարության կառավարմանն ուղղված խորհրդատվություն, ինչպես նաև ստացել են անհատական խորհրդատվություն:

«Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում» ծրագրով նախատեսված ծրագրային ուղղությունների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր, ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիր, «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում Հայաստանում – փուլ - 2» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) համատեղ ծրագիր, «ERASMUS երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիր: